

ԴՐԴՉԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՆՁԵՐԱՆԳԱՅԻՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Ժամանակակից հայերենի դրդչական նախադասությունների հնչերանգի առանձնահատկությունները որոշակի հետաքրքրություն են ներկայացնում¹, մինչդեռ այդ հարցը հատուկ փորձառական ուսումնասիրության չի ենթարկվել: Հարցի մանրամասն ուսումնասիրությունը բերում է այն համոզման, որ թե՛ հրամայական նախադասություններ և թե՛ հորդորական նախադասություններ հասկացություններն ամենևին էլ չեն սպառում տվյալ հնչերանգային տիպին պատկանող նախադասությունների (ֆրազների) առանձնահատկությունները, այլ ներկայացնում են ամբողջական երևույթի մեկ՝ գերիշխող մասը («հրամայական» տերմինի դեպքում): Քանի որ տվյալ թեմայի շուրջը ուսումնասիրվող բոլոր նախադասությունները բնորոշվում են մեկ ընդհանուր հատկանիշով՝ հնչերանգային վորով, ուստի այն մենք համարվել ենք մեկ ընդհանուր դրդչական նախադասություններ խորագրի տակ: Ընդ որում, այդ հնչերանգային կառույցները ֆիզիկական առանձնահատկություններով մոտ են միմյանց և կարող են դիտվել մեկ խմբի շրջանակներում²:

Դրդչական նախադասությունների գործառությունն ուղղված է խոսակցին որպես որևէ գործողություն կատարելու թելադրանք, դրդում: Այս տեսակետից դրդչական նախադասություններն իրենց հնչերանգային կառուցվածքով որոշակիորեն տարբերվում են պատմողական և հարցական նախադասություններից: Սակայն, քանի որ քերականական հարացուցային ձևերի և նախադասության հնչերանգային տիպերի միջև մեծ տարբերություն է նկատվում, ուստի և լեզվի քերականական միջոցների և խոսքի հնչերանգային առանձնահատկությունների ուսումնասիրման եզրերը, այնուամենայնիվ, պետք է տարբերվեն, թեև հնչերանգային կառույցները ձևավորվում են նույն քերականական ձևերի կամ միջոցների առկայությամբ:

Մինչ այժմ մեզանում նախադասությունների հաղորդակցական տիպերի դասակարգման ժամանակ միմյանցից չեն տարբերել արտահայտության և բովանդակության պլանները (Մ. Աբեղյան, Գ. Սևակ, Ա. Ղարիբյան, Ա. Աբրահամյան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան)³, ընդ որում, հաղորդակցական տի-

¹ «Դրդչական» տերմինը համապատասխանում է ավանդական «հորդորական», «հրամայական» տերմիններին:

² Հոգվածում չեն ներկայացվում փորձառական տվյալները: Դրանք կհրապարակվեն առանձին ուսումնասիրությամբ:

³ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, Գ. Սևակ, Հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 1964, Ա. Ղարիբյան, Հայոց լեզվի քերականություն, Երևան, 1964, Ս. Գ. Աբրահամյան, Վ. Գ. Առաքելյան, Վ. Ա. Քոսյան, Հայոց լեզու, 2-րդ մաս (Շարահյուսություն), Երևան, 1975:

պերի սահմանման ժամանակ հիմնական ուշադրությունը դարձվում է քերականական ձևերի վրա, հատակորեն չեն սահմանազատվում օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոնները: Սրա պատճառն այն է, որ հետադոտորները դժվարանում են որոշել, թե տվյալ խոսքային արտահայտությունը ո՞ր հաղորդակցական տիպի մեջ պետք է տեղագրել, երբ բայաձևը ցույց է տալիս մի գործողություն, իսկ խոսքային նպատակադրումն ըստ էության բոլորովին այլ է, այսինքն՝ հատակորեն չի շեղվում հաղորդակցական կողմը:

Այս հարցում զգալիորեն տարբեր է Գ. Ջահուկյանի մոտեցումը: Նա փորձում է հարցը լուծել, այսպես կոչված, հարաբերակցային սկզբունքի դիրքերից⁴: Հարաբերակցային մոտեցումը Գ. Ջահուկյանը հետևողականորեն տարբերում է արտահայտության և բովանդակության պլանները, դրանք քննում է առանձին-առանձին, ապա պարզում նրանց ներքին փոխհարաբերությունը: Անդրադառնալով եղանակավորման հարցին, նա նշում է, որ Ֆրանցահաղորդակցային ակտը ըստ հաստատա-ժխտականության եռակողմանի պրոցես է՝ աշխարհի միջնորդված ընկալման պրոցես, մինչդեռ՝ «եղանակավորումը անմիջական շփման պրոցես է»⁵:

Նախադասությունների հաղորդակցական տիպերի դասակարգման ժամանակ մենք հաշվի ենք առել արտահայտության և բովանդակության պլանների տեղի փոխհարաբերությունը: Մեր ուսումնասիրությունը տարվել է նախադասությունների արտահայտության պլանի դրսևորման ուղղությամբ. ընդ որում, դրդյալան հնչերանգային հաղորդակցական տիպի մեջ միավորվել են այն բոլոր նախադասությունները, որոնք ունեն մի կողմից հնչերանգային միատեսակ պատկերներ, մյուս կողմից՝ կամային դրսևորման յուրատեսակ ուղղվածություն:

Ինչպես նշվեց, ժամանակակից հայ քերականները, սովորաբար որպես հիմք ընդունել են նախադասության միջոցային կամ առանցքային բառերի քերականական ձևերը կամ նրանց առանձին կիրառությունները: Սա վերաբերում է նաև գրաբարի ուսումնասիրությանը: Այսպես, գրաբարի գրեթե բոլոր ձևերն արկենքում կարելի է գտնել այն միտքը, որ հրամայականները պայմանավորված են բայերի ստույգ ժամանակաձևերով, որի շնորհիվ էլ սահմանված են հրամայականների երեք հիմնական ձևեր. արգելական հրամայական, բուն հրամայական և հորդորական հրամայական. ընդ որում, արգելական հրամայականը, որը իմաստով համապատասխանում է աշխարհաբարի համանուն ձևին (օրինակ՝ մի՛ շարժեր = մի՛ շարժիր, մի՛ շարժիր = մի՛ շարժվիր և այլն), կազմվում էր միայն ներկայի հիմքի ձևերի հիման վրա, իսկ բուն հրամայականը՝ հրամայական եղանակի ներկյան (օրինակ՝ շարժեա՛ր = շարժի՛ր, շարժեցե՛ք = շարժեցե՛ք, շարժեա՛ց = շարժվի՛ր, շարժեցա՛ք = շարժվեցե՛ք) և հորդորական հրամայականը՝ հրամայական եղանակի ապառնիս (օրինակ՝ գիտաճի՛ր = իմացի՛ր, իմացա՛ծ եղի՛ր և այլն) համապատասխանաբար կազմվում էին բայի առջյալ կատարյալի և ներկրորդ ապառնու հիմքերից⁶: Ինչպես տեսնում ենք, թեև այստեղ տարբերակվել են հրամայականների նույնիսկ մի քանի ձևեր և դրանք ներկայացվել են բազմաթիվ օրինակներով, սակայն ուսում-

⁴ Գ. Բ. Ջահուկյան, ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Երևան, 1974, էջ 353:

⁵ Նույն տեղում, էջ 352:

⁶ Ա. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձևեր, Երևան, 1976, էջ 127—129, 143—157:

նասիրության ընթացքում շեշտը դրվել է ոչ թե նյութի շարահյուսական գործառնության վրա, որի միջոցով էլ լացահայտվում և դասակարգվում են հնչերանգային հաղորդակցական տիպերն ու դրանց ենթատեսակները, այլ հիմնականում կատարվել է ձևաբանական վերլուծություն և հնչերանգային ձևերին կամ տեսակներին (հատկապես հրամայական հնչերանգային հաղորդակցական տիպի կազմավորման հարցում) անդրադարձել են քերականական ձևերի դիրքերից, պայմանավորելով այն հիմնականում եղանակային ձևերով: Այս առումով ուշադրավ է Ի. Կուսիկյանի աշխատքը, որ թեև նախադասությունների մի տեսակի կազմում կարող են հանդես գալ բայի հրամայական եղանակով արտահայտված ձևերը, աքնուկապման համար տիպի նախադասությունների պատկանելիությունը կարելի է սահմանել բացակայողականների համակարգում⁷:

Ուստի քերականագիտության մեջ ևս հարցը միանշանակ լուծում չի ստացել: Այստեղ նույնպես խոսքի հնչերանգային խմբերն, ըստ նախադասությունների արտահայտման նպատակի, չորս հաղորդակցական տիպերի են բաժանել. պատմողական, հարցական, դրդական և բացակայողական: Սակայն դեռևս քսանական թվականներին ըստ տեսած Ա. Պեշկովսկու հոգևածում⁸ առկա են աշխատի միտումներ, որոնք լայնորեն զարգացան մեր օրերում: Այս սկզբունքը տարածվեց հատկապես հետադարձական ժամանակաշրջանում, երբ տեխնիկական (փորձառական) միջոցները հետազոտողներին հնարավորություն տվեցին օբյեկտիվ աուդիոների հիման վրա մեկնաբանել և նկարագրել այն երևույթները, որոնք մինչ այդ ուսումնասիրվել և ներկայացվել են սոսկ մտահղացումների ձևով: Նախ առաջ քաղվեց հնչերանգի օբյեկտիվ հետազոտման խնդիրը: Սա նշանակում է, որ առաջին հերթին անհրաժեշտ է սահմանել հնչերանգային տիպերն ըստ իրենց ֆիզիկական կառույցների, հաշվի առնել նրանց գործառական արժեքը խոսքի շղթայում, կարողանալ տարբերակել սուբյեկտիվ արտահայտչամիջոցները օբյեկտիվ արտահայտչամիջոցներից, իսկ ամենագլխավորը՝ կարողանալ տարբերել հնչերանգային կառույցների ենթատիպերը ոչ թե ըստ քերականական կառուցվածքի և նրանց կազմում առանձին միջոցային ձևերների (բառերի), այլ դասակարգել դրանք ըստ բոլոր հնչերանգային կառույցներին բնորոշ յուրահատուկ առանձնահատկությունների: Այսպես, եթե ավանդական ըմբռնմամբ հարցական նախադասությունների շարքում որպես ենթատիպեր ճանաչվում են հարցական բառով հարցական նախադասությունների տարատեսակներ, կամ ընդհանրապես՝ առանց հարցական բառի տարբերակներ, կամ լրացուցիչ հարցման հնչերանգ պարունակող նախադասություններ և այլն, ապա հնչերանգի կառույցի առանձնահատկության տեսակետից անհրաժեշտ է սահմանել այն տարատեսակները, որոնք թեև համախմբվում են մեկ ընդհանուր հաղորդակցական տիպի (հարցականի) կազմում, սակայն տարբերվում են իրենց կիրառությամբ ու գործառնության մեջ: Հարցականների շարքում դրանց թվին են պատկանում ա) ուղղակի հարց, բ) անուղղակի հարց, գ) ճշգրտող (уточня-

⁷ И. К. Кусикьян, Очерки исторического синтаксиса литературного армянского языка, М., 1959, стр. 17.

⁸ А. М. Пешковский, Интонация и грамматика («Известия по русскому языку и словесности АН СССР», 1928, т. I, кн. 2).

ющий) հարց, դ) կրկնահարցում (переспрос), ե) հանդիպական հարց (встречный вопрос), զ) երկրորդական (альтернативный) հարց և այլն⁹:

Պատմողական նախադասությունների հնչերանգային առանձնահատկությունները բնութագրելիս սովորաբար նշվում է միայն, թե նման նախադասություններին բնորոշ է տոնի հավասար, միապաղաղ ընթացք, որն ավարտվում է կորի իջեցումով: Սակայն պարզվում է, որ նույնիսկ բուն պատմողական նախադասությունները ոչ միայն քերականական կառուցվածքի և բառակազմութամբ, այլև հնչերանգային կորերի տեսակետից ստորաբաժանվում են մի քանի ենթատեսակների. հաղորդման, հաստատման, արձանագրման, խորհրդի, առաջադրանքի և այլն¹⁰:

Հատ պատմողական նախադասությունների հնչերանգային առանձնահատկությունների սահմանվում է՝ ա) բուն պատմողական հնչերանգային կառույց, բ) անվանական (դեմոնիկատիվ) նախադասության հնչերանգ, գ) բուն հաղորդակցական պատմողական նախադասությունների հնչերանգային կառույցներ և դ) պատասխանի (էքսպլիկատիվ) կառույցներ¹¹:

Ռուսերենի ակադեմիական քերականության վերջերս հրատարակված պրակտիկ նախադասություններն ըստ նպատակադրման բաժանվում են երկու հիմնական խմբերի՝ պատմողական և հարցական¹²: Հաղորդակցական մյուս տիպերը հաշվի չեն առնվել, որովհետև դրանք զուրկ են օբյեկտիվ եղանակավորող նշանակություններից (վերջինիս տակ արդի ռուս քերականները հասկանում են ստորոգելիական և շարահյուսական ժամանակի կատեգորիաների արտահայտման համակարգը)¹³: Ինչ վերաբերում է հուշատարահայտչական միջոցներով օժտված, սակայն օբյեկտիվ եղանակավորող նշանակություններից զուրկ նախադասություններին, ապա դրանք քննվում են առանձին՝ որպես անկանոն քերականական կառույցներ, որոնք ունեն միայն սուբյեկտիվ եղանակավորող նշանակություններ և, որոնք խոսքում գործառության մեջ են գտնվում հիմնականում անկախ դիրքում¹⁴: Նման նախադասությունների շարքն են դասվել նաև դրդական կամ հրամայական նախադասությունները և ընդհանրապես հնչերանգային հաղորդակցական մյուս ենթատիպերը: Այսպիսով, խոսքի հնչերանգային հաղորդակցական տիպերն արդի վիճակում ներկայացվում և ուսումնասիրվում են միմյանցից անջատ, որի պատճառով խախտվում են դրանց ռուսումնասիրության հստակ սկզբունքները:

⁹ Е. А. Брызгунова, Практическая фонетика и интонация русского языка, М., 1963; А. А. Метлюк, Интонация альтернативного вопроса в современном английском языке (автореферат кандидатской диссертации), М., 1968; И. В. Борисюк, Интонация украинского вопросительного предложения, Киев, 1975 և այլ աշխատություններ:

¹⁰ М. А. Виллер, Об интонации простого нераспространенного предложения в русском языке («Ученые записки ЛГУ», № 237, Л., 1960); Л. К. Цеплитис, Анализ речевой интонации, Рига, 1974; Այս երևույթը դիտել ենք նաև մենք, Վ. Ն. Հայրապետյան, Ժամանակակից հայերենի անդամ և անվանական նախադասությունների հնչերանգային հաղորդակցական տիպերը («Լեզվի և ոճի հարցեր», հ. 5, Երևան, 1978):

¹¹ А. Т. Ченушэ, Интонация некоторых видов повествования в современном молдавском языке («Ученые записки I Московского гос. пединститута иностранных языков» («I-МГПИИЯ»), т. 60, М., 1971).

¹² «Грамматика современного русского литературного языка», М., 1970, стр. 545.

¹³ Նույն տեղում, էջ 542:

¹⁴ Նույն տեղում, էջ 574:

Դրդշական նախադասությունների մասին խոսելիս պետք է ընդգծել օբյեկտիվության գործոնի նշանակությունը հաղորդակցական այս տիպի նկատմամբ. եթե այդ շափանիշը չընդունենք, ապա կնմանվենք այն մասնագետներին, որոնք առանց ստույգ սահմանազատման և դասակարգման սկզբունքի նշում են դրդշական նախադասությունների հնչերանգային ձայնածավալը (դիապազոնը)՝ սկսած կտրական հրամանից կամ հրահանգից մինչև հորդորն ու խնդրանքը¹⁵։ Անշուշտ այս երանգներն առկա են նշված հաղորդակցական տիպի շրջանակներում, սակայն կարևորն այն է, թե ինչպես են դասակարգվում դրանք։

Այս հոդվածում ներկայացնում ենք այն օրինակները, որոնք կազմում են, այսպես կոչված, հրամայական¹⁶ հաղորդակցական ենթատիպին պատկանող հնչերանգային կառույցները։ Երևույթը բնեկ ենք ինչպես միակազմ (հիմնականում՝ անդեմ և անվանական), այնպես էլ երկկազմ նախադասություններով՝ փորձառական եղանակով։ Կատարված աշխատանքների արդյունքների նախնական վերլուծությունը ցույց է տալիս, որ անդեմ և անվանական նախադասությունների կազմում հնչերանգային առավելագույն ձայնաբանական ցուցանիշները ինտոնոգրամի վրա կենտրոնացված են գլխավոր անդամին պատկանող հատվածում։ Անդեմ նախադասությունների դեպքում այն ընկնում է բաշաձեերով (հիմնականում անորոշ դերբայով) արտահայտված բառերի վրա. օրինակ՝ «Յրվե՛լ, պառկե՛լ...» (ՀՔՄՏԶ, 453), իսկ անվանական նախադասությունների դեպքում այն առանցքային բառի վրա, որն արտահայտվում է տարբեր խոսքի մասերով, օրինակ՝ «Առա՛ջ,— հրամայեց լեյտենանտը» (ԱՆԹ., 317), «Զգա՛ստ։ Այդ բառը կրկնվեց վաշտ առ վաշտ» (Ն. տ., 490)։ Այս տեսակետից միակազմ հրամայականները թե՛ միջուկային հնչերանգային հատվածով և թե՛ հնչերանգային կառույցով (հիմնականում՝ մեղեդայնության կորի ցուցանիշներով) նման են նույն միակազմներից բացակաձայնական նախադասությունների հնչերանգային պատկերին. հմտ. «Դադա՛ր, դադա՛ր,— գոչում էին սեպուհիները» (ԴԴՎ, 17), կամ՝ «Ոչ մի գիշում։ Բոլորս կկործանվենք, հի՛թ չմիանանք» (Ն. տ., 105), «Լուռքյո՛ւն,— սաստեց դատարանի նախագահը» (ԱՍՈՎՄ, 427)։ «Կրակի՛ր պատրա՛ստ» (ԱՀՄ, 128) և այլն։ Այստեղ և՛ հրամայականները, և՛ բացակաձայնակները հանդես են գալիս այդ տեսակներին միայն բնորոշ յուրահատուկ հնչերանգային կորագծով, որը խիստ հակադրված է մյուս հաղորդակցական տիպերին։ Այսպես, օրինակ, եթե պատմողական տիպի նախադասություններում մեղեդայնության կորի համար պարտադիր է տոնի իջեցում՝ հնչման ավարտի ժամանակ, հարցական նախադասությունների կազմում՝ տոնի անկում հնչման ողնի հատվածում, ապա դրդշական նախադասությունների դեպքում նման անկում տեղի չի

¹⁵ «Грамматика русского языка», т. II, ч. I, М., 1954, стр. 364.

¹⁶ Ռուս լեզվարանական գրականության մեջ побудительные предложения հասկացության տակ մերթ հասկացվում են բուն հրամայական նախադասությունները (М. И. Матусевич, Современный русский язык, Фонетика, М., 1976), մերթ լայն առումով դրդշական նախադասությունները (А. В. Бельский, Побудительная речь («Уч. записки I-МГПИИЯ», т. 6, М., 1953); Л. А. Вербицкая, Мелодика побудительных предложений в русском языке («Вопросы фонетики», № 325, Л., 1964) և այլն.

¹⁷ Այս և հետագա ընդգծումները մերն են—Վ. Հ.:

ունենում: Եթե նույնիսկ լսողությամբ ընկալվում է ձայնի ինչ-որ իջեցում, ապա փորձառական վերլուծության ժամանակ նման անկումը ձայնաբանական ցուցանիշներով աննշան է: Այս հանգամանքը թույլ է տալիս դրդչական նախադասությունների հնչերանգային կառուցվածքը ներկայացնել հիպերթուրիկ կորի տեսքով՝ ի տարբերություն պատմողական և հարցական նախադասությունների հնչերանգային կորերի, որոնք խոսքում ընդհանուր առմամբ հանդես են գալիս պարարտիկ տեսքով: Այս առումով հետաքրքիր է համեմատական վերլուծություն կատարել պատմողական և դրդչական հնչերանգային կորերի միջև և. Վերթիցկայան նման համեմատության հիման վրա գտնում է, որ ռուսերենի պատմողական նախադասություններում, ի տարբերություն դրդչականների, հնչման ավարտն արտահայտվում է մեղեդայնության կորի սուր անկմամբ¹⁸: Ավելին, ընդգծելով այդ հաղորդակցական տիպին բնորոշ առանձնահատկությունները, նա հանգում է այն եզրակացության, որ Ա. Պեշկովսկու առաջ քաշած այն թեզը, թե հնչերանգային առանձնահատկությունները պայմանավորված են միայն քերականական կառուցներով ու նրանց կազմությամբ և խոսքի մասերի փոխանակմամբ կարելի է ստանալ ցանկացած հնչերանգային տիպը¹⁹, ենթակա է վերանայման: Լ. Վերթիցկայայի այս եզրակացությանը համամիտ է նաև Մ. Մատուսևիչը²⁰:

Անդրադանալով արդի հայերենի երկկազմ դրդչական նախադասությունների հնչերանգային կառուցների քննությանը, ասենք, որ նման կազմության օրինակները, մեր կարծիքով, վճռական դեր չեն կարող խաղալ: Ընդհակառակը, դրանք կրկին հաստատում են մեր այն միտքը, որ անկախ կազմությունից, յուրաքանչյուր հաղորդակցական տիպի պատկանող նախադասություն խոսքում հանդես է գալիս այդ կարգին բնորոշ հնչերանգային հատկանիշներով: Այսպես, օրինակ, եթե քննության առնենք այնպիսի նախադասություններ, ինչպիսին են «Գնա՛, — ասում է, — քանի լուս լուս է հնձի, որ մութն ընկնի կգաս» (ՀԹԵ, III, 151), «Գնա՛ քարավան, մեղմ հնչյուններդ հյուսելով երկնի լույս ղողանջի հետ» (ԱԻԱԼՄ, 48), «Լո՛ւ՛ր, անզգամ, — կատաղած գոռաց գեներալը» (ԱԻԱԷ, 272), «Լո՛ւ՛ր, օ՛ձ, — աղաղակեց Մանեն անզուսպ կատաղությամբ» (ՆԴՊ, 107) և այլն, ապա ակնհայտ է դառնում այն հանգամանքը, որ երկկազմությունը, որը լեզվում կամ խոսքում պայմանավորված է բայի դիմավոր ձևերով, ամենեին էլ չի ազդում նման հնչերանգային կառուցին բնորոշ առանձնահատկությունների վրա: Այստեղ, ինչպես և միակազմ նախադասություններում հնչերանգի ձայնաբանական բոսն էությունը կենտրոնացված է նախադասության միջուկային հատվածում, որն էլ, անկախ քերականական կազմությունից, արտահայտում է տվյալ դրդչական հաղորդակցական տիպին բնորոշ ձայնաբանական նախադրյալները:

Դրդչական նախադասություններին բնորոշ ստույգ հնչերանգային պատկեր դիտվել է գրեթե բոլոր քննված օրինակներում: Նույնիսկ այն դեպքում, երբ նախադասությունն ընդարձակ է և թվում է, թե նրա շրջանակներում դժվար է սահմանել միջուկային հատվածը (որովհետև ինտոնացիաները սովորաբար լի են ձայնաբանական որոշակի ցուցանիշներով), այնուամեն-

¹⁸ Л. А. Вербицкая, նշվ. աշխ., էջ 109:

¹⁹ А. М. Пешковский, նշվ. աշխ.:

²⁰ М. И. Матусевич, նշվ. աշխ., էջ 270:

նայնիվ հնարավոր է բացահայտել հնչյան կորի այն բնորոշ ուրվագիծը, որը տարբերակում է որոշակի հնչերանգային հաղորդակցական տիպին պատկանող նախադասությունները: Ընդհանուր է, դրոշականների դեպքում այդ հատկությունը պայմանավորված է մասնավորապես հրամայական եղանակով արտահայտված բայաձևերով և նրանց շրջապատող բառերով, սակայն կորին հատուկ ուրվագիծը բնորոշում են ոչ միայն այդ ձևերը, այլ նաև այն առանձնահատկությունները, որոնք օբյեկտիվորեն գործում են խոսքում կամ լեզվում՝ սահմանազատելով մեկը մյուսից տարբեր հնչերանգային տիպեր: Նման երևույթ դիտել ենք «Տո՛, վեր կաց է, մթնեց է...»²¹ (ԶԹԵ, III, 113): «Դու մի ասի՛ր...» (Ն. ա., 156), «Աղջի, ձայնդ քեզ պահիր» (ՍԽԶ, 158), «Դե լավ, ձայնդ կտրիր...» (Շիրվ. 6-րդ, 156), «—Լո՛ւի՛ր, աղաչում եմ քեզ, մի ճիշիր նրա անունը, գոնե մի՛ ճիշիր...» (Մուր. 3-րդ, 165), «Լո՛ւի՛ր, անզգամ...», «Է՛նու մի ճավատա (ժպտուն աչքերին)» (ԶԹԵ, I, 120), «—Բագրատ, ապա նա՛ւիր, նայիր,—» (ԱԶՍ, 230), «Չհամարձակվե՛ք հարձակվե՛ք ազնիվ մարդկանց վրա» (Ն. տ.), «...Կմտնե՛ք քաղաք, իմաց կտաք ներսում եղած մեր մարդկանց» (Ն. տ., 459) և շատ ուրիշ օրինակներում: Թեև այս նախադասությունները հուզաարտահայտչական նշանակություն կամ միջոցներով և իմաստային դրսևորումներով միմյանցից տարբերվում են, սակայն, այնուամենայնիվ, ունեն մեկ ընդհանուր գործոն, որը նրանց պահում է հնչերանգային մեկ տեսակի շրջանակներում: Այդ գործոնը արտահայտվում է վամ տոնի բարձրացումով, որը իր ցուցանիշներով անհամեմատ բարձր է սովորական տոնայնության աճման մակարդակից (Բագրատ, ապա նայիր, նայիր» և նման օրինակներում), կամ ուժգնության բարձր ցուցանիշներով: Առաջին դեպքում ցուցանիշները, կախված հաղորդավարի հուզման աստիճանից կամ սեռին հատուկ ձայնածավալից, հասնում են մինչև 9 կիսատոնի, իսկ երկրորդը (ձայնի հզորության մակարդակով)՝ մինչև 25 մմ գծային ցուցանիշների (մոտ 35 դեցիբել): Այս դեպքում հուզաարտահայտչական միջոցները (զայրույթ և դողման այլ եղանակներ), որոնք սուբյեկտիվ արտահայտչամիջոցներ են, միայն տեժեղացնում կամ նվազեցնում են ընդհանուր վորի ձևէջը, որը բացարձակ ցուցանիշներով որոշակի փոփոխություններ չի կրում: Այնպես որ, եթե մի կողմ դնենք խոսքի սուբյեկտիվ արտահայտչամիջոցների դրսևորումները, որոնք անհամեմատ մեծ գործածություն ունեն հատկապես դրոշական նախադասությունների կազմում, մնում է միայն որոնել օբյեկտիվ այն գործոնը, որը շունչ է տալիս հնչերանգային հաղորդակցական այս կամ այն տիպին: Այս սկզբունքով դեկավարվելիս, հավանաբար, չէր առաջանա այն տարակուսանքը, որը դիտում ենք Ս. Աբրահամյանի մոտ. «Հրամայական եղանակով, որպես կանոն, հարցական նախադասություն չի արտահայտվում... Սակայն երբեմն հրամայական եղանակի բայաձևերն իրենց վրա վրում են հարցում: Դա լինում է այն դեպքում, երբ խոսողը ցանկանում է որևէ պատճառով... հարց տալ խոսակցի, որևէ մեկի կամ իր արտահայտած հրամայական եղանակի բայաձևի գործողության մասին: Օրինակ՝ «...նա ասաց՝ զնա՞»:

21 Այս և նման նախադասությունները մագնիսային ժապավենի վրա գրանցվել են լրիվ, իրենց էությունը պահպանող: Սակայն ինտոնոգրաֆի վրա գրանցվել են միայն մեկ հետաքրքրող հատկանիշները:

Դու նրան ասացիր՝ արի՞՛22: Մեր կարծիքով, թե՛ քերականական առանձնահատկություններով, և թե՛ հատկապես հնչերանգային կառույցով նման նախադասությունները կարելի է դասել միայն ու միայն հարցական հնչերանգային տիպի շրջանակներում՝ անկախ քերականական այն ձևերից, որոնք գործածվում են այդ և նման նախադասությունների կազմում: Սրանով էլ պայմանավորված են այն նոր սկզբունքը և ուսումնասիրման մեթոդիկան, որոնցով մենք ղեկավարվում ենք մեր հետազոտությունների ընթացքում:

Այսպիսով, արդի հայերենի դրոշական նախադասությունների հնչերանգային առանձնահատկությունների քննության և փորձառական տվյալների նախնական վերլուծության արդյունքները թույլ են տալիս հանգելու հետևյալ եզրակացությունների:

1. Հնչերանգային կառույցների կազմավորման ընթացքում հիմնական գործոններից են օբյեկտիվ և սուբյեկտիվ արտահայտչամիջոցները: Առաջինների միջոցով կազմավորվում են հնչերանգային հաղորդակցական տիպերը՝ պատմողական, հարցական և դրոշական, իսկ երկրորդների օգնությամբ սահմանվում են այն խոսակցական երանգները (հորդոր, զայրույթ, խնդրանք և այլն), որոնք հաղորդակցական տիպ չեն կազմում և այլ ու այլ գործառնության մեջ չեն գտնվում որևէ հաղորդակցական տիպի շրջանակներում:

2. Հնչերանգի՝ որպես վերհատկության երևույթի քննությունը ցույց է տալիս, որ այն ալլես չի կարող ուսումնասիրվել քերականագիտության ոլորտում, քանի որ հնչերանգային կառույցների առանձնահատկությունները կախումն ունենում են դրվում հեղանակային ձևերից, երբեմն «համալրելով» հիմնական հաղորդակցական տիպերը կոչակառով և նույնիսկ ըղձական հնչերանգային տիպերով, որի հետևանքով հաղորդակցական հիմնական տիպերի քանակը մնում է անորոշ՝ օբյեկտիվ ուսումնասիրման սկզբունքների բացակայության պատճառով:

3. Դրոշական նախադասությունների հնչերանգային առանձնահատկությունների լուսաբանման գործում անհրաժեշտ է սահմանել հիմնական հաղորդակցական տիպը, նրա կայուն նեթատիպերը և այն բազմաթիվ տարատեսակները, որոնք գործում են այդ տիպի կամ նեթատիպի սահմաններում: Մեր տվյալներով, հրամայական նախադասությունները լեզվում հանդես են գալիս որպես դրոշական հաղորդակցական տիպի մեկ առանձին կայուն նեթատիպ, ուր հնչերանգային առանձնահատկությունները արտահայտվում են այնպես, ինչպես բնորոշ են ողջ հաղորդակցական տիպին: Այս առումով, այսպես կոչված, հորդորական, խառը երանգի վրա բնութի, ըղձական, կոչական և այլ նախադասությունները դիտել ենք որպես դրոշական տիպի տարատեսակներ, որոնք կարող են տարբալուծվել հրամայականների և բացականչականների կայուն նեթատիպերի կազմում: Նման տեսակի նախադասություններին, ըստ իրողության պայմանների, կարող են ուղեկցել կամային (էմֆատիկ) կամ հուզական (էմոցիոնալ) արտահայտչամիջոցները, որոնք սուբյեկտիվ բնույթ են կրում և, որոնցով պայմանավորված են հնչերանգային այս վրա մայն տարատեսակները տվյալ հաղորդակցական հնչերանգային

22 Ս. Գ. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի շարահյուսության մի քանի հարցեր, Երևան, 1962, էջ 79:

տիպի ներսում: Նման երևույթների ձայնաօձավոր թեև մեծ է հատկապես դրողական տիպի կազմում, սակայն բոլոր դեպքերում տվյալ հաղորդակցական տիպի շրջանակներից դուրս չի դիտվում:

4. Հրամայական հնթաախայի նախադասություններին, ինչպես նաև դրողական նախադասությունների մյուս անսակներին բնորոշ է կորագծի մի այնպիսի դիրք, որը մենք անվանել ենք հիպերբոլիկ կորագծի՝ ի ասարբերություն պարաբոլիկ կորագծի, որով հիմնականում կարելի է տարբերակել հատկապես պատմողական հաղորդակցական հնչերանգային տիպին պատկանող կառույցները:

ՀԱՄԱՌՈՑԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԱԻԱԷ—Ավետիք Իսահակյան, Արձակ էջեր, Երևան, 1963:
 ԱԻԱՄ—Ամետիք Իսահակյան, Արու-Լալա-Մահարի, Երևան, 1971:
 ԱՀՍ—Անդրանիկ Հովսեփյան, Սիրտը, Երևան, 1957:
 ԱնԹ—Սովետահայ զրականության անթուղիա, Երևան, 1950:
 ԱՍՈՎՍ—Անահիտ Սեկոյան, Ոսկե վազերի մեջ, Երևան, 1958:
 ԴԴՎ—Դ. Դեմիրճյան, Վարդանանք, Երևան, 1951:
 ՀԹԵ—Հ. Թումանյան, Երկեր, հ. I, Երևան, 1950, հ. III, Երևան, 1949:
 ՀՔՄՏԶ—Հր. Քոչար, Մեծ աան զավակները, Երևան, 1952:
 Մուր.—Մուրացան, Երկեր, հ. 3, 1963:
 ՆԴՊ—Նար-Դոս, Պայքար, Երևան, 1957:
 Շիրվ.—Շիրվանզադե, Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, 1959:
 ՍԽՀ—Ս. Խանզադյան, Հողը, Երևան, 1957:
 Ն. տ.—նույն տեղում:

3

ОСОБЕННОСТИ ИНТОНАЦИИ ПОБУДИТЕЛЬНЫХ ПРЕДЛОЖЕНИЙ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

ВЛАДИМИР АЙРАПЕТЯН

Резюме

В традиционной арменистике вопрос об интонационных коммуникативных типах рассматривается лишь в плане грамматических изысканий, в силу чего вопрос о количестве коммуникативных типов, по существу, остается открытым. В этом плане основную акцентуацию на грамматический состав, на глагольные формы, в определенном (в данном случае—повелительном) наклонении—как на основной способ для классификации побудительных предложений—также не следует считать правомерным методом для отграничения аналогичных конструкций. В решении данного вопроса необходим новый, кардинальный ход исследовательских работ. Прежде всего необходимо разграничить субъективный и объективный критерии при определении коммуникативных интонационных групп или типов. Далее, при определении коммуникативных типов, их качественной и количественной характеристик

необходимо учитывать объективность их интонационных структур, особенность их физической картины, представленной в экспериментальных данных. Результаты предварительного анализа данных экспериментов позволяют в современном армянском языке разграничить три основных коммуникативных интонационных типа: типы повествовательных, вопросительных и побудительных предложений. Последний объединяет в себе два подтипа: собственно побудительные (императивные) и восклицательные предложения.